ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 04/19

30.01.2019թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)** քննարկելով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ նաև Դիմող կամ Պաշտպան) 2018 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Ըստ Պաշտպանի դիրքորոշման՝ կալանավորված կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու դեպքում նա մեխանիկորեն զրկվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև՝ հաղորդակցության ազատության իրավունքից:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ հիմարկի պետի որոշմամբ կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու հետ միաժամանակ նա ցանկացած պարագայում, մեխանիկորեն՝ անկախ որևէ հանգամանքից, զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից՝ տեսակցություններից,

հեռախոսազանգերից, նամակագրությունից, ինչպես նաև՝ գրականությունից, լրատվության միջոցներից օգտվելուց և այլն:

Այսպիսի կարգավորումների պայմաններում, ըստ Պաշտպանի՝ ստացվում է, որ տույժի այդ միջոցն ունի լրացուցիչ զրկանքներ պատճառելու բնույթ, որոնք որևէ կապ չունեն տույժի նպատակների և պատճառների հետ: Սա իր հերթին այդ արգելքները դարձնում է ինքնանպատակ: Ստացվում է, որ անձին պատժախուց տեղափոխելիս և դրա հիմքով նրա նկատմամբ վերը նշված զրկումները կիրառելիս որևէ բացառություն չի քննարկվում, անհատական մոտեցում չի ցուցաբերվում:

Այսինքն՝ գործող կարգավորումների պայմաններում անձին պատժախուց տեղափոխելը առաջացնում է սահմանադրական իրավունքների պարտադիր զրկում՝ առանց հնարավորություն տալու քննարկելու այդ զրկման նպատակահարմարության, համաչափության հարցերը: Ուստի, ըստ Դիմողի՝ նշվածն առաջացնում է կալանավորված կամ դատապարտված անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության իրավունքներից անհամաչափ և մեխանիկական զրկում:

Պաշտպանը գտել է, որ տվյալ դեպքում քննարկվող սահմանադրական իրավունքների սահմանափակման համար պարտադիր պայման պետք է լինի կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից կատարած ենթադրյալ խախտման և կոնկրետ իրավունքի սահմանափակման միջև կապի առկայությունը: Մասնավորապես, իրավունքի սահմանափակումը չպետք է լինի ինքնանպատակ, այլ պետք է միտված լինի կոնկրետ նպատակի իրականացմանը, որը հնարավոր կլինի բացառապես խնդրո առարկա իրավունքի սահմանափակման միջոցով: Մինչդեռ դիմումում վկայակոչված խնդրո առարկա դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն համապատասխանում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից մշակված չափանիշներին: Յուրաքանչյուր դեպքում պատժախուց տեղափոխված ազատությունից զրկված անձն արտաքին աշխարհի հետ կապից զրկվում է մեխանիկորեն՝ բացառություն չնախատեսող արգելքի ուժով:

Վերոգրյալից ելնելով՝ Դիմողը գտել է, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասության իրավակարգավորումները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31, 33, 78, 81-րդ հոդվածներին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2019 թվականի փետրվարի 5-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի առարկան կազմող խնդրին առնչվող իրավակարգավորումների բովանդակությունը հետևյալն է.

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը սահմանում է.

Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց արգելվում են նամակագրությունը, տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների, լրացուցիչ սննդամթերք, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ, հանձնուքներ ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու ստանալը, հեռուստադիտումները, սեղանի խաղերից օգտվելը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են դրամական փոխանցումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը և աշխատելը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուքներ ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:

…

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ պարբերության համաձայն՝

Պատժախցում գտնվելու ժամանակահատվածում կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է նամակագրությունը, տեսակցությունները (բացառությամբ փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների), հեռախոսազրույցները, լրացուցիչ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության և այլ առարկաների ձեռք բերումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, հանձնուքների և ծանրոցների ստացումը, սեղանի խաղերից, թերթերից, գրքերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելը:

ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթների բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը սահմանում է.

Ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

1) նկատողության հայտարարում.

2) պատժախուց տեղափոխելը մինչև տասն օր, իսկ անչափահասներին՝ մինչև հինգ օր ժամկետով:

Սույն հոդվածով սահմանված տույժի միջոցները կիրառվում են կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ:

Կալանավորված անձի նկատմամբ տույժի միջոցներ կիրառելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, նրա անձը և վարքը՝ մինչև խախտումը կատարելը: Կիրառվող տույժի միջոցը պետք է համապատասխանի կատարված խախտման ծանրությանը և բնույթին:..

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածը սահմանում է.

1. Պատիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր, իսկ անչափահաս դատապարտյալին՝ մինչև տասն օր ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժի միջոցները կիրառվում են ներքին կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 223-րդ կետի համաձայն՝

223. Կալանավորված անձինք կամ դատապարտյալները պատժախուց կարող են տեղափոխվել հետևյալ դեպքերում՝

ա) այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ ճնշում գործադրելու, նրանց վիրավորելու կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի կամ այլ անձանց վրա հարձակում գործելու,

բ) կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի օրինական պահանջներին չենթարկվելու,

գ) արգելված առարկաներ, իրեր և սննդամթերք պահելու, օգտագործելու և պատրաստելու,

դ) կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի գույքը փչացնելու համար:

Պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց կիրառվում է նաև այն կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ, որոնց նկատմամբ նախկինում կիրառվել են երկուսից ավելի կարգապահական տույժեր:

Այսպիսով, վերը նշված իրավակարգավորումներից հետևում է, որ կալանավորված կամ դատապարտված անձանց նկատմամբ ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում նախատեսված է կիրառել միայն տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսի են նկատողությունը, խիստ նկատողությունը (դատապարտվածի նկատմամբ) և որոշակի ժամկետով պատժախուց տեղափոխելը: Տույժի այլ տեսակներ նշված իրավական ակտերով նախատեսված չեն: Ընդ որում, պատժախուց տեղափոխելը համարվում է թվարկված տույժի տեսակներից ամենախիստը, որի կիրառման դեպքում կալանավորված անձինք պատժախցում պահվում են, իսկ դատապարտյալները՝ կարող են պահվել միայնակ: Նշված տույժի տեսակի կիրառման դեպքում կալանավորված կամ դատապարտված անձանց նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ, այդ թվում՝ **կալանավորվածների դեպքում՝ նամակագրությունը, տեսակցությունները, հեռուստադիտումները, դատապարտվածների դեպքում՝ տեսակցությունները, հեռախոսակապից օգտվելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը:**

Վերը նշված սահմանափակումների կիրառումը պատժախուց տեղափոխված կալանավորների կամ դատապարտյալների նկատմամբ առաջին հերթին հարուցում է ՀՀ Սահմանադրության 31-րդ, 35-րդ հոդվածների խախտման վտանգ առ այն, որ միայնակ պահվելուց և մի շարք զրկանքների ենթարկվելուց զատ, նշված անձինք զրկվում են նաև հաղորդակցվելու և տեսակցությունների իրավունքից, ինչը ենթադրում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հաղորդակցության ազատության և գաղտնիության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանափակում:

Սահմանադրության նշված հոդվածներում ուղղակիորեն ամրագրված է, որ քննարկվող իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով սահմանված որոշակի նպատակով: Մասնավորապես, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ ***պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:***

Իսկ հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ ***պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:***

Պետք է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է սահմանադրական իրավունքների սահմանափակման հիմքերին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 04.10.2006թ. թիվ ՍԴՈ-649 որոշման մեջ նշել է. *«…Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)»:*

ՀՀ Սահմանադրական դատարանի 07.02.2007թ. թիվ ՍԴՈ-677 որոշման մեջ արտահայտված դիրքորոշման *իմաստով «…համաչափության սկզբունքի … համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:*

Սույն սահմանադրական վեճի շրջանակներում խնդրահարույց է հատկապես քննարկվող սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափությունը այնքանով, որքանով պատժախուց տեղափոխվելու և այնտեղ միայնակ պահվելուց զատ, կալանավորված կամ դատապարտված անձը զրկվում է նաև հաղորդակցության և ընտանկանկյանքի անձեռնմխելիության իրավունքից նույնիսկ, օրինակ, այն դեպքում, երբ տույժի այդ միջոցն իր նկատմամբ կիրառվել է վերևում նշված կառավարության որոշման 223-րդ կետի դ) ենթակետի, այն է՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի գույքը փչացնելու համար:

Ակնհայտ է, որ, օրինակ, կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի գույքը փչացնելու համար կալանավորվածին կամ դատապարտվածին պատժախուց տեղափոխելը, ներառյալ՝ նամակագրությունը, տեսակցությունները, հեռուստադիտումները, հեռախոսակապից օգտվելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը սահմանափակելը, **պիտանի, անհրաժեշտ չեն Սահմանադրությամբ սահմանված վերը նշված նպատակներին հասնելու համար և համարժեք չեն անձի ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության իրավունքի նշանակությանը:**

Հետևաբար, կալանավորվածներին կամ դատապարտված անձանց նկատմամբ պատժախուց տեղափոխելը որպես տույժի տեսակ նախատեսելը, որը միաժամանակ զուգորդվում է անձի ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության իրավունքի սահմանափակմամբ, ՀՀ սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից վիճահարույց է: Այդ կապակցությամբ, կարծում ենք, լիարժեքորեն հիմնավորված են Դիմողի փաստարկները նաև մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի վկայակոչման և մեկնաբանման համատեքստում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասության դրույթների սահմանադրականությունը խնդրահարույց է:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան